ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.09.2017թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/30**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի 04.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/30 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 04.09.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով 13.07.2017թ. կայացած «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցի, տվյալ դեպքում «ԱԲԻ» ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի չէ հայտի բնօրինակից արտատպված փաստաթղթի վրա և վերջինիս հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետին (այսուհետ նաև՝ Կարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ)՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտի էլեկտրոնային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Ընթացակարգի գանահատող հանձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Docx ձևաչափով փաստաթղթերը ներառում են Գրիգոր Քեշիշյանի (ՀԾՀ՝ 3312570166) էլ. ստորագրությունը: Էլեկտրոնային փաստաթղեթերը բացվում են փոփոխությունների սխալի հաղորդագրությամբ, որը կարող է պայմանավորված լինել տվյալ Word փաստաթղթի ծրագրային տարբերակով: Հաշվի առնելով փաստաթղթերում կցված էլեկտրոնային ստորագրության դարանի մանրամասները, այն է՝ ամսաթիվ, սերիա, համար, hash ալգորիթմ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ–ն հաստատել է, որ փաստաթղթերում առկա ստորագրությունը վավեր է և կարող է ընդունվել:

Սակայն պատվիրատուի կողմից հարցում չի կատարվել արդյո՞ք մասնակցի հայտը բնօրինակ փաստաթղթից արտատպելիս էլեկտրոնային ստորագրությունը տեսանելի է թե՝ ոչ, քանի որ այդ մասով չկա համապատասխան եզրակացություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ–ի կողմից:

*Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝*

Ընկերությունը վկայակոչել է, որ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը, որի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում << ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ << ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

*Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝*

Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար «Համազգեստ»-ի ձեռքբերման նպատակով 13.07.2017թ. կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2, 6.1, և 6.1.3 կետերով կայացրած որոշումները և ստուգել «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտի, մասնավորապես՝ գնային առաջարկի և հայտի ապահովման արտատպման դեպքում էլեկտրոնային ստորագրության տեսանելիությունը, քանի որ դրանից բխող հետագա բոլոր գործողությունները կատարելու դեպքում բողոքը կդառնա առարկայազուրկ և դրանով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ին կհասցվի վնասներ, մասնավորապես՝ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն կզրկվի նշված ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնելու իրավունքից:

Ընկերությունը ի լրումն 04.08.2017թ. բողոքի 11.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հնաձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2, 6.1, և 6.1.3 կետերով կայացրած որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.09.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 04.09.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

## 2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Ի պատասխան Խորհրդի 05.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/16104-17 գրության՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 07.09.2017թ. թիվ 7/01/1/9879-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով համազգեստի ձեռքբերման գնման ընթացակարգ և ընթացակարգի հրավերը ս/թ. հուլիսի 4-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգով ուղարկվել է հնարավոր մասնակիցներին: Ընթացակարգի հայտերի բացման նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներակայացրած հայտի էլեկտրոնային թվային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ ունեցել է կասկածներ և Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է գնահատող հանձնաժողովի նիստը՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հարցում ներկայացնելու նպատակով՝ «ԱԲԻ»-ի հայտի էլեկտրոնային թվային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: Սույն թվականի հուլիսի 14-ին, ի պատասխան կատարված հարցմանը՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից ստացվել է պատասխան, համաձայն որի Docx ձևաչափով փաստաթղթերը ներառում են Գրիգոր Քեշիշյանի (ՀԾՀ՝ 3312570166) էլ. ստորագրությունը: Էլեկտրոնային փաստաթղեթերը բացվում են փոփոխությունների սխալի հաղորդագրությամբ, որը կարող է պայմանավորված լինել տվյալ Word փաստաթղթի ծրագրային տարբերակով: Հաշվի առնելով փաստաթղթերին կցված էլեկտրոնային ստորագրության դարանի մանրամասները, այն է՝ ամսաթիվ,

սերիա, համար, hash ալգորիթմ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հաստատել է, որ փաստաթղթերում առկա ստորագրությունը վավեր է և կարող է ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.07.2017թ. հայտերի բացման վերսկսման նիստով «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներակայացված հայտը գնահատել է բավարար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.09.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, 07.09.2017թ. թիվ 7/01/1/9879-17 գրությամբ Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը:

## 3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ «Համազգեստի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԱԲԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5.2 ենթակետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված հայտարարությունները և գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը լրացուցիչ մասնագիտական եզրակացության անհրաժեշտություն ունի:

3. Նույն արձանագրության 7-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտի էլեկտրոնային թվային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հարցում է ներկայացվել:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2017թ. կասեցված նիստի վերսկսման թիվ 2/1 արձանագրության 8-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ԱԲԻ»

ՍՊԸ-ի հայտի էլեկտրոնային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կատարված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխան, համաձայն որի Docx ձևաչափով փաստաթղթերը ներառում են Գրիգոր Քեշիշյանի (ՀԾՀ՝ 3312570166) էլ. ստորագրությունը: Էլեկտրոնային փաստաթղթերը բացվում են փոփոխությունների սխալի հաղորդագրությամբ, որը կարող է պայմանավորված լինել տվյալ Word փաստաթղթի ծրագրային տարբերակով: Հաշվի առնելով փաստաթղթերին կցված էլեկտրոնային ստորագրության դարանի մանրամասները, այն է՝ ամսաթիվ, սերիա, համար, hash ալգորիթմ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հաստատել է, որ փաստաթղթերում առկա ստորագրությունը վավեր է և կարող է ընդունվել:

4. Նույն արձանագրության 10.1.3 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, Ընթացակարգի 3-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԱԲԻ» ՍՊԸ-ին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.08.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/26 որոշումը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի չեղարկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2017թ. թիվ 2/1, 19.07.2017թ. թիվ 2/2 և 26.08.2017թ. թիվ 3 նիստերի արձանագրություններով կայացված որոշումները:

6. Նույն արձանագրության 2.2 ենթակետով կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը շարունակել 13.07.2017թ. հայտերի բացման թիվ 2 կասեցված նիստից և վերագնահատել Ընթացակարգի մասնակիցների հայտերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 31.08.2017թ. դրությամբ առկա են տվյալ ընթացակարգի գնման հայտով հատկացված ֆինանսական միջոցներ:

7. Նույն արձանագրության 6.1 ենթակետով կայացված որոշման համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 6.1.3 ենթակետով կայացված որոշմամբ

Ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԱԲԻ» ՍՊԸ-ին:

## 4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի 04.09.2017թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի 11.09.2017թ. գրությունը, «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, նաև որ՝ ***տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտապումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ «Համազգեստի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.19 ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում ***մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա***, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԱԲԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 5.2 ենթակետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված հայտարարությունները և գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը լրացուցիչ մասնագիտական եզրակացության անհրաժեշտություն ունի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2017թ. կասեցված նիստի վերսկսման թիվ 2/1 արձանագրության 8-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտի էլեկտրոնային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կատարված հարցմանն ի պատասխան՝ ստացվել է պատասխան, համաձայն որի Docx ձևաչափով փաստաթղթերը ներառում են Գրիգոր Քեշիշյանի (ՀԾՀ՝ 3312570166) էլ. ստորագրությունը: Էլեկտրոնային փաստաթղթերը բացվում են փոփոխությունների սխալի հաղորդագրությամբ, որը կարող է պայմանավորված լինել տվյալ Word փաստաթղթի ծրագրային տարբերակով: Հաշվի առնելով փաստաթղթերին կցված էլեկտրոնային ստորագրության դարանի մանրամասները, այն է՝ ամսաթիվ, սերիա, համար, hash ալգորիթմ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն հաստատել է, որ փաստաթղթերում առկա ստորագրությունը վավեր է և կարող է ընդունվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6.1 ենթակետով կայացված որոշման համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, նույն արձանագրության 6.1.3 ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԱԲԻ» ՍՊԸ-ին:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի և հրավերով սահմանված պահանջների միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր հավելվածների, այդ թվում նաև հավելված 5-ի՝ գնային առաջարկի, և հավելված 10-ի՝ տուժանքի մասին համաձայնագրի և նրան կից վճարման պահանջագրի, արտատպված տարբերակի վրա տեսանելի չէ էլեկտրոնային թվային ստորագրությունը, մինչդեռ՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.19 ենթակետով սահմանվել է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում ***մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:***

Միևնույն ժամանակ Կարգ 32-րդ կետի 12-րդ ենթակետը սահմանում է, որ հրավերով նախատեսվում է, նաև որ՝ ***տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային***

***եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը)*** **հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:**

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և հայտի ապահովումը չեն համապատասխանում հրավերի պահանջներին և Կարգի 41-րդ կետի համաձայն վերջիններս ենթակա չեն շտկման, ուստի Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն հայտերի բացման նիստում «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման, իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի այն պահանջին, որ դադարեցնել Ընթացակարգի գնահատող հնաձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2 ենթակետը, ապա սույն մասով բողոքը ենթակա է մերժման, քանի որ Պատվիրատուն վերը նշված ենթակետով, վերագնահատելով Ընթացակարգի մասնակիցների հայտերը, կատարել է Խորհրդի 21.08.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/26 որոշումը և քանի որ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Խորհրդի որոշումն իրավապարտադիր է, ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի գործողությունները սույն մասով իրավաչափ են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

# ՈՐՈՇԵՑ

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 04.09.2017թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. դադարեցնել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 6.1 և 6.1.3 ենթակետերով կայացրած որոշումները, մասնավորապես՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ և 9-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2 ենթակետով կայացված որոշումը դադարեցնելու վերաբերյալ պահանջը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ